

# Սուրբ Գրոց Սերտողություն : Դաս Թիւ 143

**Համբարձում** – Յիսուսը անգամներ ակնարկեց Իր համբարձումը (Յովհաննէս 6:62, 14:1-2, 12, 16:5, 10, 28, 20:17). այդ նաեւ նշւած է Նոր Կտակարանի նամակներում (Եփեսացիս 1:20, 4:8-10, Փիլիպպեցիս 2:9-11, Ա. Տիմոթէոս 3:16, Եբրայեցիս 1:3, 4:14, 9:24): Ղուկասը ներկայացնում է այս եղելութեան նկատմամբ եղած ամենամանրամասն բացատրութիւնը (Ղուկաս 24:50-53, Գործք Առաքելոց 1:9-11):

**Քրիստոսի համբարձման բնոյթը** – Նախ, այդ մի տեսանկէլի դէպք էր, թողնելով ոչ մի կասկած թէ Քրիստոսը վերացաւ աշակերտներից, նշանաւորելով Նրա հետ եղած նրանց յարաբերութեան մի նոր հանգրուանի սկիզբը՝ ուր Նա այլեւս չպիտի լինէր տեսանելիօրէն ներկայ նրանց հետ երկրի վրայ: Երկրորդ, այդ Աստուած-մարդու մարմին եւ հոգու տեղափոխութիւնն էր: Երրորդ, այդ Քրիստոսի անձնաւորութեան մի տեղական շարժում էր՝ մի տեղից՝ երկրից, մի ուրիշ տեղ՝ երկինք: Սուրբ Գիրքը խօսում է երկնքի առթիւ մի քանի իմաստներով որոնցից մէկն է Աստուծոյ բնակարանը՝ նաեւ հրեշտակների, փառաւորած սրբերի եւ Քրիստոսի մարդկային բնութեան (Մատթէոս 18:10, 22:30, Ղուկաս 2:15, Յովհաննէս 14:1-2), ակնարկելով թէ երկինքը միայն մի վիճակ չէ, այլ նաեւ մի վայր է: Բացի Աստուած, երկնքում եղած բոլոր ուրիշները ունեն իրենց էութեան հունաւոր տարածութեան մաս կամ սահման, եւ ուստի բնակւում են մի իրական վայրում:

**Ստանալու փառք, պատիւ, եւ իշխանութիւն** – Որպէսզի կատարելագործի փրկանաւորութիւն Իր ժողովրդի համար, Քրիստոսը խոնարհեցրեց Իրեն, եկաւ այս աշխարհ Իր վրայ առնելով մարդկային բնութիւն, եւ ուստի կողմ դրեց Իր երկնային փառքը եւ պատիւը: Փիլիպպեցիս 2:9-11-ում Պօղոսը բացատրում է թէ Յիսուսի կատարած գործի հիման վրայ, Հայրը Նրան շատ բարձրացրեց, եւ շնորհեց Նրան մեծ փառք եւ իշխանութիւն՝ որոնք առաջուց Նրանը չէին: Այս բարձրացումը Քրիստոսի աստուածային բնութեան չէր վերաբերում որը Նրանն էր բոլոր յաւիտենականութիւնից (Յովհաննէս 17:4-5), այլ Նրա մարդկային բնութեան էր վերաբերում: Սկսեալ Իր յարութիւնից եւ համբարձումից Յիսուսը ստացաւ ըստ Իր մարդկութեան այն ինչ որ Նա միշտ ունեցել էր ըստ Իր աստուածութեան (Եբրայեցիս 2:7-9):

**Ներկայացնելու Իր գոհն Աստուծոյ երկնային տաճարումը** – Ինչպէս Հին Ուխտում կենդանինը գոհում էին Սուրբ Սրբութիւնից դուրս, եւ ապա քահանայապետը գոհի արիւնը կ'տանէր եւ շաղ կ'տար ողորմութեան պոռոչի վրայ Սուրբ Սրբութեան մէջ՝ ժողովրդի քաւութեան համար (Ղեւտացոց 16:14-15), նոյնպէս էլ հարկաւոր էր որ Իրեն մատուցանելուց յետոյ՝ որպէս կատարեալ եւ անբիծ գոհը, Քրիստոսը որպէս մեր Քահանայապետը ապա անցներ երկինքներով եւ մտնէր անձեռագործ տաճարը՝ երկնային Սուրբ Սրբութիւնը, եւ ներկայացնէր Իր գոհը Աստուծոյ առջեւ՝ մեր համար:

**Բարեխօսելու Իր ժողովրդի համար** – Քրիստոսի քահանայական ծառայութիւնը Իր կատարեալ գոհի մատուցանելով չաւարտեց, այլ այդ շարունակում է Իր յարութեամբ եւ համբարձումով, ուր Քրիստոս որպէս մեր Քահանայապետը բարեխօսում է մեզ համար Հօր առջեւ երկնքում (Եբրայեցիս 4:14, 7:25, 8:1-2, 9:24, 10:12): Յիսուսը շարունակաբար աղօթում է մեր հոգեւոր աճման եւ յարատեւութեան համար (Յովհաննէս 17:20, Եբրայեցիս 7:24-25): Նա պաշտպանում է մեզ մեր բոլոր թշնամիներից (Չաքարիա 3:1-2, Հռովմայեցիս 8:33-34, Ա. Յովհաննէս 5:18). որպէս մեր ողորմած եւ գթառատ Քահանայապետը Նա երկնքից օգնում է մեզ (Եբրայեցիս 2:18, 4:15-16). եւ Նա Աստուծոյ առջեւ ընդունելի է դարձնում մեր պաշտամունքը, աղօթքները, եւ ծառայութիւնը՝ որոնք թերի եւ մեղքով խառնուած են (Ա. Պետրոս 2:4-5):

**Տեղ պատրաստելու Իր ժողովրդի համար** – Իր համբարձումը ակնարկելով Յիսուսը ասեց Իր աշակերտներին որ նրանց թողնելու էր եւ գնալու էր Հօրը որպէսզի նրանց համար տեղ պատրաստել (Յովհաննէս 14:1-3): Բացի մեր ֆիզիքական յարութիւնը՝ ինչպէս Քրիստոսի յարութեամբ նախապատկերացած, Քրիստոսի համբարձումը նաեւ նախապատկերացնում եւ վստահեցնում է մեզ մեր ապագայ անձնական համբարձումը երկինք, լինելով Նրա հետ ընդմիջտ: Խօսելով դրա մասին, Ա. Թեսաղոնիկեցիս 4:16-18-ում Պօղոսը կոչ է մղում որ «իրար միմիջարեցէք այս խօսքերովը»:

**Ուղարկելու Սուրբ Հոգուն** – Նաեւ պէտք էր որ Քրիստոսը գնար որպէսզի ուղարկէր Սուրբ Հոգուն Իր աշակերտներին (Յովհաննէս 14:16-18, 16:5-7): Յիսուսը ասեց Իր աշակերտներին որ այդ հարկաւոր եւ լաւ էր դրանց համար (Յովհաննէս 16:16-22): Ուստի Հոգու լիառատ եւ բազմազան ծառայութիւնը սկսեց Պենտեկոստէի օրումը (Գործք Առաքելոց 2), որպէսզի լուսաւորէ, սրբացնէ, լիազօրէ եւ սպառազինէ հաւատացեալներին որպէսզի կեանքի նորոգութեան մէջ քայլեն, սպանեն մարմնի գործերը, եւ ծառայեն ու շարունակեն Քրիստոսի գործը՝ հռչակելով փրկութեան բարի լուրը մինչեւ երկրի ծայրերը (Ղուկաս 24:49, Յովհաննէս 14:26, 15:26-27, 16:7-15, Գործք Առաքելոց 1:8, Ա. Կորնթացիս 12:4-11, Բ. Կորնթացիս 3:18, Հռովմայեցիս 8:13, Գաղատացիս 5:16-18, Եփեսացիս 1:17-18, 4:7-16):